

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

«Հայ ժողովրդական հեֆիաթների» III հառորը տպագրության էր պատրաստվում, երբ վախճանվեց ներկա հրատարակության ընդհանուր խմբագիր ակադեմիկոս Հովսեփ Օրբելին:

Ակադեմիկոս Հ. Օրբելին շատ խոշոր վաստակ ունի հայ բանասիրության հավաքման, հրատարակման ու հետազոտության բնագավառում: Նա եռանդուն մասնակցություն է ցուցաբերել «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսի հագարամյա հորելյանին, բազմաթիվ հոդվածներ և ուսումնասիրություններ նվիրելով էպոսին: Ակադեմիկոս Հ. Օրբելու խմբագրությամբ և իմաստալից ներածությամբ է լույս տեսել «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք տեքստը: Ականավոր գիտնականը արհիների ընթացքում հնագիտական և բանասիրական իր ուսումնասիրություններին զուգընթաց հավաքել է նաև բանասիրության հարուստ նյութեր, հետազոտություններ գրել և կատարել թարգմանություններ: Գրականության ինստիտուտի հրատարակությամբ վերջին տարիներս լույս տեսան ակադեմիկոս Հ. Օրբելու «Հայ ժողովրդական հերոսական էպոսը», «Միջնադարյան Հայաստանի առակները» աշխատությունները: Մի շարք գործեր տակավին մնում են անտպ:

Ակադեմիկոս Հ. Օրբելին իր խորհուրդներով և ցուցումներով մեծ օգնություն է ցույց տվել «Հայ ժողովրդական հեֆիաթների»

ներկա գիտական հրատարակության գործին, լինելով այդ հրատարակության բնդհանուր խմբագիրը:

Ակադեմիկոս Հ. Սրբելին հայ ժողովրդի մտավոր մշակույթի ասպարեզում շատ կարևոր ու առաջնակարգ տեղ էր տալիս ժողովրդական բանահյուսությանը: Բանավոր ստեղծագործության հուշարձաններում՝ էպոսում, հեքիաթներում, երգերում, առածներում մեծանուն գիտնականը տեսնում էր ազատության ու անկախության համար աշխատավար հայ ժողովրդի մղված դարավոր պայքարի գեղարվեստական անդրադարձումը, նրա հոգեբանությանն ու աշխարհըմբռնումը, երազանքներն ու իդները:

Մեծավաստակ հայագետ Հ. Սրբելու ցանկությունը՝ հրատարակված տեսնել հայ բանահյուսության հարուստ ժառանգությունը, Ինստիտուտը շարունակում է իրականացնել՝ տպագրության պատրաստելով «Հայ ժողովրդական հեքիաթների» հետագա հատարները: